

անուն քահանայի մը, որուն համար Հաստորին վերջը կը կարգանք, թէ՝ «Քահանայ օրենուած է «ՌՄԾԵ Տին, այսինքն (1215 + 551) — 1766ին»:

Ապուսայիդի Մարդակազմութեան օրինակ մը ևս կայ Վանքին մէջ և կը զբանուի 1794 թուահամարով և Թրիստոսի 1723 թուին Ղալաթիոյ մէջ թարգմանուած է կատունի «Գիրք Ռատուցման» կոչուած գործին հետ, բայց այնչափ գէշ զրուած օրինակ մ'է՝ որ չ'արժէր խօսիլ վրան:

Տօք. Վազրաս Յ. Թորոսիս

Վեճետիկ — Ս. Ղազար

14 Յունիսար 1923

(Ժարութակելի)

## ՄՊԱՅԱԿԻ ԶԱՅԱՐՄԱԿԱԼ ԳԱԽԱՌԸ

(Աղջոյքական - Պարունական ռազմական բառեր)

(Ժար. տես Բազմ. 1924, էջ 328)

Հիւանդուրիմ և բժշկուրիմ. — Զահարմանակի զիւզացու կեանքի ցաւերն ու դժբախտութիւնները բազմաթիւ են. նրա անհուն ցաւերից մէկն էլ զիւզերում տարածւած հիւանդութիւնները և բժշկի բացակայութիւնն է. Չնայելով, որ Զահարմանան իր լնոնային դիրքի շնորհի առողջարար և բարիկան ոչ ունի, սակայն ժողովարութիւնը առողջապահական տարական պայմաններու մասին հասկացողութիւն չունենալով և բժշկական միջոցներից զորկ լինելով՝ տարիկան հարիւրաւոր անմեղ զոներ է տալիս:

Հիւանդութիւնների տարածւելու զլիաւոր պատճառը զիւզերում տիրող առասպեկան կեղտութիւնն ու անմաքրութիւնն է: Հիւանդութիւնները տարածւելուն նպաստում է նաև այն, որ զիւզացիներից շատերն իրենց հեռու չեն պահում տարափոխիկ հիւանդութիւններից. հիւանդին այցելելը սուրբ պարտականութիւնն են համարում և շատ անզամ հիւանդի ամանից միասին են ուստում: Այս բոլորի վոյա ամելացնենք և այն, որ գաւառը զորկ է բժշկական որ և է

օնութիւնից. ամբողջ Զահարմանալում ոչ դեղատուն կայ, ոչ հիւանդանոց և ոչ էլ մի բժիշկ, որով սուրբ վարակիչ հիւանդութիւնների գէպաւում, զիւզացիներն սպիտակած դիմում են գիւղական «ապրիմներն», զանազան պահան կանաց խորհուրդներն և շատ անզամ էլ սափրիշներին, որոնք թժկելու փոխարքն, աւելի ևս վատթարացնում և ծանրացնում են հիւանդութիւնը: Գիւզացիները տեսնում է, որ նրանցից ոչ մի «ճար» չկայ, յուսահաս դիմում է «գիր անող» կախարդներին կամ ապաւինում է սրբերի օգնութեան, որոնց զոհ է մատուցանում, մոմ վառում, խունկ ծխում կամ քահանային աւետարան է կարդալ տալիս և օրնաւծ ջոր է սրոկում հիւանդի վրայ: Խոչ երբ այդ միջոցներն էլ չեն օգնում, այս ժամանակ հիւանդին տալիս են ուզած կերպուրն ու խմիչքը, որուն զի նա շտուգ առողջապահայ:

Ընդհարապէս զաւառում տարածւած է ժաղիկ և աշբացու հիւանդութիւնները երեխանների մէջ, իսկ ետեղյին յատուկ հիւանդութիւնը, որ վերջին 20 տարիների ընթացքում տարածել է Զահարմանալում և տարել ու տանում է բազմաթիւ զոներ, դա «կարմիր քամի» (սիփիլիս): Կոչած տարափոխիկ հիւանդութիւնն է, որ տարածւած է թէ՝ կանաց և թէ տղամարդկանց մէջ, համարեա թէ իւրաքանչիւր զիւզում կարելի է զանել 1-5 ներկայացուցիչ յիշեալ հիւանդութեամբ վարակած: Հաս զիւզերուն կան մէկից աւելի սներ, որոնց բոլոր անգամներն էլ, փոքրից մինչև մեծ, զարաւած են սիֆիլիտով և տանեակ տարիներից ի վեր տանչուում են, վըշանուում և ուշչանուում...

Ահա այսպիսի անմիջիար զրութեան մէջ է գտնում Զահարմանակի հայ զիւզացիութեան բժկական զորքը: Անհրաժեշտ է և հրամայողական՝ անօգնական և անճար դրութեան մէջ տառապող խեղճ զիւզացիներին մի մասյուն բժիկ և գեօրոյայ ուղարկել, նրանց այդ ցաւալի ու կորստաբեր զրութիւնից ազատելու համար:

Մահ, բաղրամ և մեսելոց. — Գիւզացիների ասելով՝ մահը Աստծոյ նախասահմանութիւնն է, որ իւրաքանչիւր մարդու ճակատին գրած է և ոչ չի կարող նրանից խուսափել: Աստծոյ հրամանով Գաբրիէլ հրեշտակապետը զալիս է երկնից և կարում մարդու կեանքը:

Եթէ մարդը հեշտութեամբ է աւանդում հո-

1. Այդ հիւանդութիւնը չերել են հոգկատանից:

զին, նշանակում է որ արդար է, իսկ եթէ ոչ՝ շար է:

Եթր սկսում է մէկի հոգեարքը, իսկոյն կանչում են քահանային, որ հարորդութիւն տայ, ապա երեսը դարձում են գէպի արևելք և խալաթը (պատառափը) գնում բարձի տակ, որպէս զի շյուշը ետ ըլլին» և հոգին հեշտութեամբ աւանդէ:

Եթր աւանդում է հոգին, իսկոյն մի հոգի ննջեցեալիք աշքերը, բերանը գոցում է և ծեռները խաչում կը ծիրին. ապա սիրելները հաւաքում են շուրջը և բարձրածայն ողբում: Եթէ մտնողը յայտնի անձնաւորութիւն է, օրինակ գիրդի տանուտէրը, զովում են այսպէս.

Պաջլ նշին<sup>1</sup> բարամ ջան,  
Քեադինուղա նշին<sup>2</sup> բարամ ջան,  
Իմ խան շնաօ<sup>3</sup> բարամ ջան:

Եթէ տան հայրն է մեռնող՝ ողբում են.

Մէյ տան սութուն<sup>4</sup> բարամշան,  
Մէյ տան բարապաթ<sup>5</sup> բարամշան,  
Մէյ ինչլք ու խրաթ բարամ ջան,  
Մէյ մէհնքեած<sup>6</sup> բարամ ջան:

Եղայրը ողբում է քրոջը.

Քուրում,<sup>7</sup> քուրում, քուրում ջան,  
Խմ ազիք քուրում ջան,  
Խմ ձէփի եայլուր քուրում ջան:

Քոյրը ողբում է եղօրը.

Բրար,<sup>8</sup> բրար, բրար ջան,  
Ջանիք մեռնիմ բրար ջան,  
Պոկսաց<sup>9</sup> խիզսիդ<sup>10</sup> մեռնիմ, բրար ջան,  
Գառնէրդ բուռալէն մնացին, բրար ջան:

Մայրը ողբում է որդուն.

Բալամ ջան, բալամ ջան,  
Ազի՛զ գառնիկ, բալամ ջան,  
Մրդի ճրագ, բալամ ջան,  
Ծնգնէրս ծալէցիր, բալամ ջան,  
Կոսնէրս կոտրէցիր, բալամ ջան,  
Բալամ ջան, ազի՛զ ջան:

Սովորաբար ողբը վերջին խօսքերի վրայ միւսները բարձրածայն լալիս են և շատ անգամ իրենց վարսերը փետում, կը ծիրին խփում, ծընկ-

ներին զարկում, զլուխները թակում և երբեմն էլ ուղանաց ընկնում են:

Ողբի վրայ լցում են հարեանները, ապա հետզենտէ զալիս են հանգուցեալի համարեա բոլոր ազգականները, ծախօթներն ու բարեկամները, որոնք իրենց պարտքն են համարում ներւայի լինել մեռնիլ տանը: Եթր բոլորը հաւաքում են, հրաւիրում են քահանային, որ զալիս միթարում է պաւորնելին: Այսուհեն մեռնելին դուրս են տանում և երեսը բարձրածայն ողբում: Վայր Այդ ժամանակ ննջեցեալիք տէրը հրաւիրում է Յ-Յ հոգու, որ ննջեցեալին լողացնն. լողացնողները կամ կանայք են լինում կամ տըզամարգիկ՝ նայած սեռին: Նրանք տաք ըրով լողացնում են ննջեցեալին, ապա սանգրում զլիի, յօնքերի, ենիի, մօրուքի մազերը և կըտրում ծեռների ու ոտների եղունգները, յետոյ ջրով լի մի աման զնում ֆահանայի առաջ, որ խաչու օրննէ: Օրնւած ջուրը խաչած սրկում են ննջեցեալիք վրայ և հազցնում մի շապիկ, մի վարտիկ և ոտներին մի զոյք գուզպայ, ապա ականջների, աշքերի, քթածակերի և բերանի վրայ խոնկ են զնում, կնկղում (պատանքում) և ամփոփում դազպայի մէջ. Կանայք իսկոյն շրջապատում են դազպայը և լալիս: Գահանան «Հոգոց» է ասում, որից յետոյ դազպաը կանաց զրկախառնութիւնից ազատելով՝ դուրս են բերում և շարական երգելով՝ տանում: Ննջեցեալիք դազպային հետևում են ոչ միայն ազգականներն ու բարեկամները, այլ և զիւղի ամբողջ հասարակութիւնը: Տեղական սովորութեան համաձայն եթէ հիւսնող կէս գիշերնին էլ վախճանի տանում են եկեղեցի, ուր մոռմ է մինչև լոյս Արաւոտեան պատարագ են անել տալիս, որից յետոյ գահանան թաղման կարգն է կատարում. ապա շորս հոգի զավազը ծեռներին բռնած կամ ուօներին դրած, իսկ եթէ փոքրիկ երեխայ է, մի հոգի ձեռքերի վրայ առած՝ տանում են գիշերնամատուն: Ճանապարհին առջնից զնում է գահանան՝ շրջանոց վրան և մի երկու տիրացու. սրանց հետևում են դազպայը կրողները և յետոյ յուղարկաւորները: Կանայք գերեզմանատուն չեն զնում, այլ զիւղի դարքասի

1. Հանդիսի նստող:

2. Տանուտէրիքի հետ նստող:

3. Խաներին ժանօթ:

4. Այխն:

5. Բարիք, օրհնանք:

6. Զարչարուղ:

7. Փոյզիկ:

8. Եղբայր:

9. Խեղճ:

10. Ընտանիք, երեխաներ:

առջև վերջին անգամ փաթաթւում են ննշեցեալին ու մի թիջ էլ լացուկու անկազ յեսոյ բաժանում են, վերադառնում ննշեցեալի տունը և սպասում տամարդկանց վերագրածին: Յուղարկաւորները էկնեցուց մինչև գերեցանատուն երեք տեղ հանգիստ են առնում և պաշտում կատարում, որի ժամանակ ննշեցեալի ազգական ներն ու հարեաններն իրեն վերջին հրաժեշտի ողջյուղ համբուրում են զագալը և 5-10 շայի փող զնում զագալի վրայ, որ պատկանում է քահանային: Վերջապէս յուղարկաւորները հասնում են գերեցանատուն: Գերեցանափորներից մինը, որ համարւում է սպակիրների ներկայացուցչը, առաջ է զալիս և զագալից բունելով՝ առաջնորդում է գերեզմանի աջ կողմը, որը քահանան սկսում է թաղման կարգը: Ննշեցեալի տէրը երեք բուռ հող ժամանային օրնել տալով՝ թաշանձ ձգում է գերեցանանի մէջ, ապա իջնցընութ են զագալը. ննշեցեալի տէրը նորից ժամանային երեք բուռ հող օրնել տալով՝ խաշան ածում է զագալի վրայ և երբ օրնութիւնը վերջանում է միևնու յուղարկաւորները և գերեցանահանատունը հողով լցնում են գերեզմանը և մի թումբ շինում, խունկ ծխում: Քահանան հողաթումը խաչակրում է զլիի, սրաի և ոտների վրայով, ապա «հողոց» ասելով վերջացնում թաղման կարգը: Այս ժամանակ յուղարկաւորները մօտենում են ննշեցեալի տիրոջ և նրա մօտիկ ազգականներին, մէկի մէկի ձեռք տալիս և ասում. «Բարի յիշատակ լինք, Աստած օգորմի նորուն, Աստած ձեզ շատ պահի», որին պատահանում են. «Աստած օգորմի յիշողաց ննշեցելոց, Աստած ձեզ բարի տայ»: Այնունետև խմբովն վերադառնում են սպատուն, որը ժամանան «Հայր զիտութեանց» է ասում, որից յետոյ յուղարկաւորները նստում են ճաշի, որ տեղական բարրառով կոչում է «թաղմանիր հաց»: Նախ ճաշում են տղամարդիկ և ապա կանայք: Եթէ ննշեցեալի ընտանիքը հարուստ է, ճաշին տալիս են եախին կամ թանով շիլա և կամ փլաւ, իսկ եթէ աղքատ է՝ միայն թէյ են տալիս, որից յետոյ «օգորմի» են ասում և ցրում:

Այնունետև ննշեցեալի տանը երեք որ սուզ են պահում, իսկ եթէ կալի ժամանակ է՝ միայն մի օր սուզ են մնում: Սվորաբար տղամարդիկ եօթն օր՝ «օխտնօրէնք» չեն սափրում, իսկ կանայք կար, լւացք չեն անում և զլուխ չեն շինում: Ուոգի առաջին օրը կոչում է «թաղման

օր», երկրորդ օրը՝ «յէկնահող», իսկ եօթերորդ օրը՝ «Օխտնօրէնք»:

**Յեկնահող.** — Թաղման երկրորդ օրը առաջունան վաղ՝ ազգական և բարեկամ կանայք հաւաքում են ննշեցեալի տունը և սպատում են ազգամարդիկ և գերեզմանի վրայ քահանային «այգուց» են կատարել տալիս, ապա կանանց հետ վերադառնում սպատուն, որը քահանան «նողոց» է ասում: Այնունետև նախ ողամարդիկ և ապա կանայք հաց են ուսում և ցըռում: «Այգուց» օրը հեռաւոր գիւղի ազգական-բարեկամները են զալիս են սպատուն և մինթերում սպատուն:

**(Դ) յանորէնք.** — Թաղման եօթներորդ օրը նընշեցեալի տէրը պատարագ է մատուցանել տալիս, որին ներկայ են զոնւում ննշեցեալի ազգական բարեկամները: Եկեղեցին վերջանալուց յետոյ զնում են սպատուն հողու հաց ուտելու. ապա խորովին մերեցանատուն են զնում, որը կանայք համախմբւելով գերեզմանի շուրջը լալիս են, յետոյ քահանային կատարել են տալիս օխտնօրէից կարգը և բոլորը միասին վերադառնում են սպատուն, որը քահանան «նողոց» է ասում: Այնունետև սպատարդիկ կանչում են սափրիչին և սափրում, իսկ կանայք լւանում են իրենց «հախշամ» ները, որից յետոյ սպակիրները ցրում են:

**Քասասուունք.** — Ննշեցեալի տէրը քատասունքին նամակով հրաւիրում է իր սպակիրները և եկեղեցում պատարագ է կատարել տալիս, ապա հրաւիրում է զիւղի ամբողջ հասարակութեան և ճաշ տալիս: Քատասուն օրուց ընթացքում, ամէն կիրակնամուտ երեկոյ, կանայք գերեզմանատուն են զնում և գերեզմանի վրա հունկ ծխում:

**Տարագուին:** — Տարագլւխին ննշեցեալի աէքը հրավիրում է իր և ծառակայ գիւղիքի ազգականներին ու պատարագ է անել տալիս, որից յետոյ սպակիրները զնում են ննշեցեալի տունը և ճաշում, ապա իմբովին դիմում են գերեզմանատուն և ննշեցեալի գերեզմանի վրայ քար ցցում ու տարելից կատարում:

**Գերեզմանատունք:** — Գերեզմանատունները գըտնում են գիւղերի կից, որոնց մէջ կան մօտաւորապէն 316 տարրայ հին տապահաքարեր: Սոլորաբար ննշեցեալի գերեզմանի վրայ հողաթումը են կանգնեցնում և գերեզմանաբար ձգում: Իւրաքանչիւր վերդաստան ունի իր առանձին բաժինը, որը հանգչում են իրենց սրիելների ամիւնները:

**Վիկենա**  
(շարութակել)